ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Զանգեզուրի տեղական մեղուն աչքի է ընկնում նույն առանձնահատկություններով, որոնք հատուկ են առհասարակ Հայկական լեռնաշխարհի մյուս գավառների մեղուներին։ Նա հայտնի է խաղաղ բնավորությամբ ու մարդու լավ ընտելացած լինելով։ Երկար կնճիթը թույլ է տալիս նրան ավելի խորքից ծծելու ծաղիկների մեղրատու հյութը։ Փեթակն այստեղ նույն fpogč *էր, որին հանդիպում ենք և՛ Ղարաբաղում, և՛ Գանձակի (այժմ Կիրովաբադի) շրջանում, և՛ Լոռում—բարակ ճյուղերից հյուսված (մոտ 1 մ երկարությամբ և 25—35 սմ տրամագծով) գլանաձև* fpogčēr՝ *վրայից* prfավ *ծեփած՝* prfած։ *Մի քանի գյուղերում փեթակը կազմվում է երեսներով իրար կպցրած և արանքները* prfավ *ծեփած երկու համահավասար երկար տաշտերից։ Փեթակներն իրար վրա էին դարսվում հորիզոնական ուղղությամբ գետնից որոշ բարձրության վրա, հորիզոնական ձողերի վրա, դռնակները քամուն հակառակ կողմը դարձրած։ Այսպիսով ստացվում էր փեթակների* փarախ, *որոնք թողնվում էին բոլորովին բացօթյա՝ ծածկվելով միայն տախտակներով, հին-մին* fēչաճērավ. *ամեն տեսակ շորեղենով՝ անձրևներից պաշտպանելու համար, կամ զետեղում էին նախնական ձևով շինած տանիքի տակ, որը ծածկում էին խոտով, ծղոտով կամ հողով*[70]։

Եթե փեթակներից մեկը գողանում էին, ապա մնացածներն ըստ ավանդության ենթակա էին փչացման, կամ միջի մեղուները կարող էին կոտորվել։ Վախենում էին չար աչք ունեցողից— նրա նայելուց կամ ճանճը կվճaսվēr *և կամ մեղուների* մայrը *կընկներ ու կկորչեր խոտերի մեջ։*

Մեղր կտրելիս հրավիրում էին բարի ձեռք ունեցող մարդու, որ մեղրը փեթակի մեջ միշտ անպակաս մնա։ Ցույց չէին տալիս ուրիշին, թե ինչքան են մեղր կտրել՝ հավաքել, կամ ինչքան մեղր կար իրենց fpogčērի *մեջ։*

ՀԱՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հավը, որը հայ գյուղացու տնտեսության մեջ շատ կարևոր դեր է խաղում, իր հատուկ հավաբունը չունի Զանգեզուրի գյուղերում։ Ամառը նա քնում էր դուրսը՝ տան մոտ եղած ծառի ճյուղերի վրա կամ առհասարակ, որտեղ կարող է թառել, իսկ ձմեռը տան ներսը կամ գոմում սարքած թառի վրա։ Ձու ածելու համար տանտիկինը հարմարեցնում է որևէ առանձնացած, մեծ մասամբ մարդու աչքից հեռու մի անկյուն։ Որպեսզի հավն ավելի շատ ձու ածի, պառավները նրա հետույքը թեթև խանձում էին Դօճդօօճչի՝ Տյaռճրճդaռaջի *տանին խարույկից վերցրած կրակով, որպեսզի նրա զուրությունը նպաստի բեղմնավորմանը և բազմանալուն։*

Տավարը կա՜ վըրթէրա՜վը[71],
Վօչխարը կա՜ կա՜ռնէրա՜վը[72],
Էծէրը կա՜ հօլէրա՜վը[73],
Օձը կա ճըտէրա՜վը…
Էս մընը լակ՝,
Զիմ ծակ[74]…

70 СМОМПК, вып. XXXIV, отд. I, *էջ 189, և* вып. XXV, отд. II, *էջ 28—30*։

71 *Հորթերով։*

72 *Գառներով։*

73 *Ուլերով։*

74 *Բոլոր ձվերը* ճuէrը *ծակեն՝ դուրս գան։*